Անաստասիա Յուրիի Շումարովայի «Անձի հարմարման մեխանիզմների շարժընթացը երկարատև ռազմական հակամարտության ընթացքում» (բնօրինակը ռուսերեն) «Динамика адаптативных механизмов личности в период длительного вооруженненного конфликта» թեմայով ԺԹ. 00. 01- «Ընդհանուր հոգեբանություն, անձի հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ, հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

## Կ Ա Ր Ծ ի Ք

Վերջին տասնամյակներում աշխարհում տեղի ունեցող ռազմաքաղաքական զարգացումները հատկապես մասնակից երկրներում ապրող ժողովուրդների համար հանդիսանում են ֆիզիկական և հոգեբանական անվտանգության լուրջ սպառնալիքներ: Մյուս կողմից՝ մարտական գործողությունների ցանկացած զարգացում իր մեջ պարունակում է անկանխատեսելի վտանգավոր իրադարձություններ, որոնց նկատմամբ հասարակ մարդու, նրա ընտանիքի անդամների առնչության հավանականությունը շատ մեծ է:

Անաստասիա Յուրիի Շումարովայի ատենախոսական աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է դժվարագույն, արտակարգ պայմաններում կենսագործունեության խնդիրների ճնշող գերակայության պայմաններում ապրող մարդկանց շրջանակներում ուսումնասիրելու անձի հարմարման գործընթացի շարժընթացը, դիտարկվող երևույթների պատճառականությունները, առաջացող նորագոյացությունների սոցիալ-հոգեբանական յուրահատկությունները: Միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծվում բացահայտելու երկարատև ռազմական հակամարտության ընթացքում սոցիալական տարբեր խմբերում հաստատված մարդկանց հակամարտության պայմաններում առաջացող բնական հակազդումների հնարավոր սպեկտրը, անձի հարմարման մեխանիզմների շարժընթացի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, տեղի ունեցող գործընթացներում առկա օրինաչափություններն ու բացառությունները: Չնայած, որ վերջին տասնամյակներում հոգեբանական այս հիմնախնդիրը գտնվում է բազմաթիվ հայրենական, ռուսական, արևմտյան, ամերիկյան մտածողների ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ այն դեռևս լիարժեք լուսաբանված չէ և կարիք ունի բազմակողմանի հետազոտությունների: Մյուս կողմից՝ հիմնախնդրի լուծման կարևորությունը գտնվում է նաև մեր տարածաշրջանի

հոգեբանների ուշադրության կենտրոնում, քանի որ Արցախյան պատերազմների հետևանքները դեռևս լիարժեք վերացած չեն, հատկապես հետվնասվածքային սթրեսի ազդեցության ուսումնասիրության տեսանկյունից:

Ա. Շումարովայի ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, տեսական խնդիրների մեկնաբանման երկու գլուխներից, հետազոտական աշխատանքների կազմակերպման ինչպես նաև էքսպերիմենտալ հետազոտական երրորդ գլխից, որն իր մեջ ամփոփում է նաև կիրառվող մեթոդների նկարագրերը, նշանակալի գործոնների կիրառման պահանջները: Հետազոտության արդյունքները արտացոլված են 9 նկարների և 59 աղյուսակների տեսքով: Օգտագործվել են 307 գրական աղբյուրներ, որոնցից 85-ը ռուսերեն, 222-ը անգլերեն: Ատենախոսական աշխատանքի հիմնական ծավալը կազմում է 200 էջ: Այն իր մեջ պարունակում է նաև 3 հավելվածներ՝ լրացուցիչ 69 աղյուսակներ, իսկ ընդհանուր ծավալը կազմում է 245 էջ:

Ատենախոսական աշխատանքի ներածական բաժնում ներկայացված են հետազոտության գիտական կարևորության ու այժմեականության հիմնավորումները, ուսումնասիության գիտական պահանջների ձևակերպումները, որոնք իրականացվել են գրագետ գիտական լեզվով, գիտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին համապատասխան: Ատենախոսական աշխատանքի հայեցակարգային հիմքում ընկած են համաշխարհային ճանաչողություն ունեցող գիտնականների՝ Ա. Գոռալի, Դ. Կամինեռյի, Ա. Կարայանի, Ն. Տարաբրինայի, Ֆ. Հիգսոն-Սմիթի, Օ. Նութման-Շվարցի, Վ. Բոդրովի, Է. Զեյերի, Ջ.. Եգլեյի, Ջ. Սթիվենսի, Ա. Ռոզենբերգի, Ա. Բլեյշի, Մ. Գելկոֆի,Գ. Մանսինի, Ռ. Սիլվերի, Կիտաև-Սմիկի և բազմաթիվ այլ հեղինակների առաջավոր գաղափարները: Հետազոտական գործընթացների իրականացման ռազմավարությունը հիմնավորվում է ռազմական հակամարտություններով զբաղվող գիտնականների գիտապրակտիկ աշխատանքների արդյունավետությունն ապահովող գիտական պահանջներին վերաբերվող տեսակետներով: Ատենախոսական աշխատանքի հիմնական և մասնավոր վարկածները ուրվագծում են հետազոտական աշխատանքների իրականացման բոլոր պահանջները, նպատակի, խնդիրների հիմնարար ուղղվածությունն ու դրանց իրականացման հեռանկարները: Հետազոտության մեթոդների մարտկոցը աչքի է ընկնում առաջադրվող հիմնախնդրի լուծման գիտական պահանջների համապատասխանելիությամբ, որում ներառված է նաև մաթեմատիկական հաշվարկների իրականացման վիճակագրական մեթոդների կուռ համակարգ: Այն իր նպատակահարմարությամբ և ստացված արդյունքների ճշգրտությամբ հնարավորություն է ստեղծում իրականացնելու համապատասխան եզրակացություններ:

Հետազոտություններն իրականացվել են առաջադրված խնդիրների իրականացման հերթականության նպատակահարմարության պահանջներին համապատասխան: Ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, պաշտպանության ներկայացվող դրույթները, գիտական նորույթը, հետազոտության տեսական, գործնական նշանակությունը, ստացված արդյունքների հուսալիության և հավաստիության գիտական հիմնավորումները:

Ա. Շումարովայի ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական հետազոտությունների արդյունքները հրատարակվել են ինդեքսավորված SCOPUS միջազգային գիտական հանդեսում, արտասահմանում հրատարակվող միջազգային գիտական ամսագրերում, ինչպես նաև հավաստագրված գիտական ժողովածուներում: Հեղինակի կողմից հրատարակված 12 հոդվածները հիմնավորվում են բարձր գիտականությամբ և ստացված արդյունքների մշակման ճշգրտությամբ:

Ատենախոսության տեսական խնդիրների ուսումնասիրման առաջին գլուխը նվիրված է զինված հակամարտությունների հոգեբանական բնութագրումներին ու դրանց բազմաբնույթ ազդեցությունների և դրանց տրանսֆորմացիաների հետևանքներին, չնախատեսված վտանգների, սպառնալիքների պատճառով քաղաքացիական բնակչության կյանքի մոտիվների, իմաստի, արժեհամակարգերի փոփոխության տեսական հիմքերի ուսումնասիրմանը: Դրանցում առանձնակի քննարկվում են անձի կողմից դրանց ընկալման, զինված հակամարտությունների նշանակալիության, դրանց արժևորման և վերաբերմունքի ձևավորման ուսումնասիրությունները, ինչպես նաև կոնֆլիկտներին զուգահեռ սոցիալական տարբեր շերտերում ձևավորվող բացասական տրամադրությունների, յուրահատուկ զգացումների ու հոգեվիճակների ազդեցության առանձնահատկությունների խնդիրները: Տեսական վերլուծությունները իրականացվում են զինված հակամարտությունների հիմնախնդրով զբաղվող գիտնականների արժեքավոր աշխատանքների հիման վրա (Ջ. Իգլ, Դ. Կամիներ, Ն. Տարաբրինա, Ց. Հիգսոն-Սմիթ, Օ. Նութման-Շվարց, Վ. Բոդրով, Է.Զեյեր, Ջ. Եգլե, Ջ. Սթիվենս, Ա. Գոռալ, Գ. Եգլե, Դ. Կամինեռ, Ա. Կարայանի Ա. Ռոզենբերգ, Ա. Բլեյշ, Մ. Գելկոֆ,. Գ. Մանսինի, Ռ. Սիլվեր, Ց. Կորոլենկո, Վ. Լեբեդև, Ն. Տարաբրինա, Ռ. Կիտաև-Սմիկ, Վ. Լեոնովա, Վ. Լեբեդև, Լ. Զասեկինա, Ա. Մարտենյուկ, և այլն):

Հեղինակի կողմից վերլուծվում և բազմակողմանի մեկնաբանվում են զինված հակամարտությունների քաղաքական, պատմաաշխարհագրական, սոցիալ-հոգեբանական

պատճառականությունները, ինչպես նաև մասնագիտորեն հիմնավորվում հակամարտող երկրներում ազգաբնակչության լայն շրջաններում ձևավորվող սոցիալական վնասվածքի դրսևորման բազմազանությունները, ապրման ձևերը: Առանձնակի շեշտավորվում են հետվնասվածքային սթրեսի պայմաններում մարդկանց ապրելակերպի, կյանքի իմաստի, հեռանկարի վերաբերյալ պատկերացումների փոփոխությունները, դրանց հետևանքով ձևավորվող տնտեսական, քաղաքական, սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների առանձնահատկությունները: Հեղինակը իր վերլուծություններում մեկնաբանում է նաև արտակարգ իրավիճակներում կայուն սպառնալիքի, վտանգների պայմաններում անձի օրգանիզմի կառուցվածքային և ֆունկցիոնալ հնարավորությունների փոփոխության առանձնահատկությունները: Ատենախոսական աշխատանքի առաջին գլուխը ամփոփվում է եզրակացություններով, որոնք լուսաբանում են զինված հակամարտություններում ազգաբնակչության տարբեր շերտերի վնասվածքային վիճակների տեսանելի և քողարկված փոփոխությունների առանձնահատկությունները, ինչպես նաև հոգեֆիզիոլոգիական նորագոյացությունների բնորոշ լայն սպեկտորը:

Տեսական խնդիրների ուսումնասիրման երկրորդ գլուխը նվիրված է անձի հարմարման մեխանիզմների տեսամեթոդական հիմքերի ուսումնասիրմանը (Վ. Մեդվեդև, Ժ. Պիաժե, Ս. Կօբասա, Ս. Մադի, Ա. Մառտին, Ռ. Պլոյհառթ, Լ. Կիտաև-Սմիկ, Ա. Լեոնովա, Ջ. Օլպոռտ, Պ. Ստեռլինգ, Ֆ. Կրամեր, Ռ. Յանոֆ-Բուլման և այլն), որոնցում ներկայացվում են անձի հարմարման գործընթացի հայեցակարգային հիմնավորումները: Հեղինակի կողմից վերլուծության են ենթարկվում անձի հարմարման մեխանիզմների հոգեֆիզիոլոգիական բնութագրերը, գործընթացի բազմակողմանի բնութագրերն ու սահմանները, ուսումնասիրող հեղինակների կողմից խնդիրների լուծման ժամանակակից մոտեցումներիը, դրանց ընդհանրությունների, տարբերությունների, հակասական գաղափարների մեկնաբանումները: Այնուհետև հեղինակը անդրադառնում է հարմարման համակարգում անձի «Ես կառուցվածքի» ֆունկցիոնալ ամբողջականության ապահովմանն ուղղված պաշտպանական մեխանիզմների մեկնաբանումներին, միևնույն ժամանակ անդրադառնալով հիմնախնդրի լուսաբանման վերաբերյալ տարբեր տեսությունների հայեցակարգերին քննարկումներին ու դրանց յուրահատուկ մոտեցումների հոգեբանական վերլուծություններին: Տեսական վերլուծություններում անդրադարձ է արվում նաև անձի հարմարման համակարգում կոպինգ մեխանիզմների դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրման ռուսական և համաշխարհային ճանաչում ունեցող հեղինակների տեսակետներին: Դրանցում հեղինակը հանգում է այն հետևությանը,

որ կոպինգ ռազմավարությունները, ինչպես նաև պաշտպանական մեխանիզմները նշանակալիորեն կախվածություն ունեն եղելության համատեքստից, առաջին հերթին վնասվածքային եղելությունից և ժամանակի մեջ դրա փոփոխության ձևերից: Վերլուծություններում կարևորվում են նաև անձի հարմարման ներքին և արտաքին գործոնների հիմնախնդիրը, պահեստային հնարավորությունների սահմաններն ու սթրեսակայունության, հոգեկան աշխատունակության հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների բնութագրիչները: Վերլուծություններն ամփոփվում են համառոտ եզրակացություններով, որոնցում արտացոլվում են տեսական երկրորդ գլխի բովանդակության հիմնական գաղափարները:

Ա. Շումարովայի ատենախոսական աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է հետազոտությունների կազմակերպման ռազմավարական պահանջներին, համակազմի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների մեկնաբանումներին, ինչպես նաև մեթոդների ընտրության և կիրառման մեթոդաբանությունը ներկայացնող գիտական հիմնավորումներին: Հետազոտական աշխատանքներն իրականացվել են ռազմական հակամարտություններին կից սահմանամերձ տարածաշրջանների 17 - 68 տարեկան 283 անձանց հետ (239 կին և 44 տղամարդ), որոնք ըստ հակամարտության հետ ունեցած առընչության, 10-13 տարիներ ապրել են սոցիալական տագնապի, իրական և հավանական սպառնալիքների, վտանգների ազդեցության պայմաններում: Հետազոտության մասնակիցներն ընդգրկվել են երեք խմբերում. առաջինում 10 և ավելի տարիներ հակամարտության պայմաններում ապրողներ, երկրորդում՝ 3 տարի ապրողներ և երրորդ խմբում՝ հակամարտությունից միջնորդավորված ազդեցություն կրող անձիք: Հետազոտության մեթոդները ուղղված են առաջադրված խնդիրների լուծման և նպատակների իրականացմանը:

Ատենախոսական աշխատանքի չորրորդ գլխում ամփոփված են հետազոտական աշխատանքների արդյունքում ստացված տվյալների վերլուծությունները, որոնք ըստ փորձարարական գործընթացների իրականացման հաջորդականության, ենթարկվում են մասնագիտական վերլուծության: Հետազոտության արդյունքների վերլուծությունները, հոգեկան երևույթների մեկնաբանման հիմնավորումները, փոփոխականների կոռելյացիոն կապերի արտահայտվածության դրսևորումները արտացոլվել են մատչելի հիստագրամների, նկարների, աղյուսակների տեսքով: Հեղինակը ուսումնասիրված երևույթների վիճակագրական հաշվարկները հիմնավորել է ինչպես մաթեմատիկական վերլուծության, այնպես էլ հոգեբանական տեսությունների հիմնարար դրույթներով:

Մասնավորապես, արդյունքների վերլուծություններում վեր են հանվում տարբեր խմբերում ընդգրկված անձանց հարմարման, հարմարվածության անձնային բնութագրիչների ներքին զգացումների, պատկերացումների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ինչպես նաև դեպի դուրս ուղղված (էքստերիորիզացիայի) անձի վարքագծային դրսևորումների սոցիալ-հոգեբանական տեղաշարժերի նշանակալի փոփոխությունները:

Հետազոտությունների արդյունքում բացահայտվել են նաև երեք խմբերում ընդգրկված անձանց հարմարման գործընթացներին ուղղված պաշտպանական մեխանիզմների տարբերակիչ բնութագրերը: Բացահայտվել են նաև հարմարման գործընթացի ակտիվացման յուրահատուկ առանձնահատկություններն ու դրսևորման ձևերը, ինչպես նաև դրանց բովանդակային տարբերությունները, հարմարման գործընթացին զուգակցվող յուրահատուկ հոգեվիճակների արտահայտվածության համայնապատկերը: Կապված հակամարտությունների տևողականության և այլ բնութագրերի հետ, հետազոտության արդյունքում բացահայտվել են նաև հետազոտական երեք խմբերի բնորոշ և խմբերում ընդգրկված առանձին անձանց բացասական հույզերի բազմազանությունները: Ուսումնասիրվել են նաև խմբերում ընդգրկված անձանց ֆրուստրատիվ վիճակների հաղթահարման կոպինգ ստրատեգիաներն ու հարմարման մակարդակի տարբերակիչները, ինչպես նաև հարմարման գործընթացի ուղղվածության բնորոշ առանձնահատկությունները: Հետազոտություններն ավարտվում են ութ եզրակացություններով: Աշխատանքում տեղ են գտել նաև երեք հավելվածներ, որոնք իրենց մեջ ներառում են փորձարարական հետազոտության վիճակագրությունը և ամբողջականացնում հետազոտական աշխատանքների պահանջները:

Ատենախոսական աշխատանքին կից ներկայացվող սեղմագիրը (բնօրինակը ռուսերեն) իր կառուցվածքային և բովանդակային բնութագրերով, դրույթների ձևակերպման պահանջներով, գիտական խնդիրների համառոտ մեկնաբանումներով լիովին համապատասխանում է ատենախոսության մեջ լուծվող խնդիրների բոլոր պահանջներին: Հայեցակարգային բոլոր դրույթները ձևակերպված են գրագետ, գիտական պահանջներին համապատասխան:

Չնայած որ աշխատանքը հնարավորինս իրականացվել է ատենախոսություններին ներկայացվող գիտական պահանջների շրջանակներում, այնուամենայնիվ ունենք որոշ դիտողություններ, որոնք կուզեինք նշել:

1. Լուրջ քննադատության տեղիք է տալիս այն փաստը, որ աշխատանքում նշված չէ հիմնախնդրի վերաբերյալ որևէ հայ հեղինակի աշխատանք, նշվածները ձևական են և ոչ մի կապ չունեն քննարկվող խնդրի հետ:
2. Չափազանց մեծ է ատենախոսական աշխատանքի ընդհանուր ծավալը 245 էջ, և 200 էջ հիմնականը: Ներկայացված 9 նկարներում, 59-ը հիմնական և 55–ը հավելվածներում աղյուսակները հիմնականում առաջնային հետազոտական նյութերով են հագեցած, բացի այդ, դրանցում զետեղված բազմաթիվ հապավումներն ու վիճակագրական հաշվարկների անվերջ ընթացքն արտացոլող աղյուսակները (էջ 83, 97, 99, 100, 191-108, 118,120,143- 145,148,150 և այսպես շարունակ) կարիք ունեն ամբողջական տեսքի բերելու, որպեսզի դրանք հագեցած լինեն հոգեբանական վերլուծություններով և ոչ թե մաթեմատիկական վերլուծության անվերջ փաստարկումներով: Այլապես տպավորություն է ստեղծվում, որ ատենախոսության հեղինակը բաց թողելով դրանց իմաստային նշանակության հիմնական հոգեբանական վերլուծությունները ընդդիմախոսին առաջադրում է գլուխկոտրուկների ռեբուսային համակարգ, հետագա ընկալման գործընթացները թողնելով նրա ստեղծարարության վրա: Խնդիրը կայանում է նրանում, որ նշված աղյուսակների վիճակագրական թվերի անվերջությունը հասկանալու համար կարդացողը անընդհատ պետք մի էջից թերթի մյուսը, առավել ևս՝ դրանցում մասնագիտական վերլուծությունները երկրորդ պլան են մղված:
3. Ինչպես են ընտրվել 10 և ավելի գումարած 3 տարի տևական ռազմական հակամարտության ժամանակը, երբ Ռուս-Ուկրաինական հակամարտությունը գտնվում է չորրորդ տարվա մեջ:
4. Խմբերում ընդգրկված են պատանեկան տարիքից մինչև վաթսունութ տարեկան անձինք, սակայն հետազոտություններում առանձնացված չեն ոչ տարիքային, ոչ սեռային, ոչ ազգային գործոնները, այն դեպքում, որ նրանք իրենց գործառույթներով, առողջական, սեռային, սոցիալական նշանակությամբ, բոլորովին տարբեր հարթակներում են գտնվում, և նրանց վերաբերյալ ոչ մի տարբերակում չի դիտարկվում, որևէ ընդհանրության, բացառության, օրինաչափության վերաբերյալ խոսք անգամ չկա: Դեռ ավելին, բոլորը գնահատվում են միագույն անձնային նշաձողի մակարդակում:
5. Դուք ուսումնասիրում եք երկարատև ռազմական հակամարտության ընթացքում անձի հարմարման մեխանիզմների շարժընթացը: Ձեզ հայտնի պետք է լինի, որ հարմարման գործընթացը պահանջում է ժամանակ, ուրեմն բաց են թողնված

պայմանական պահից մինչև կոնկրետ ժամանակային փուլերում հարմարմանը բնորոշ գործընթացների հոգեֆիզիոլոգիական պարամետրերի փոփոխության ուսումնասիրությունները: Մյուս կողմից՝ հարմարումը գնահատվում է նաև անձի գործառնական հնարավորությունների դրական վերջնարդյունքով, որը չի արտացոլված Ձեր ուսումնասիրություններում:

## Եզրակացություն

Անաստասիա Յուրիի Շումարովայի «Անձի հարմարման մեխանիզմների շարժընթացը երկարատև ռազմական հակամարտության ընթացքում» (բնօրինակը ռուսերեն) «Динамика адаптативных механизмов личности в период длительного вооруженненного конфликта» թեմայով ԺԹ. 00. 01- «Ընդհանուր հոգեբանություն, անձի հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ, հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքը իր կառուցվածքով և բովանդակությամբ հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն հետազոտություն: Այն լիովին համապատասխանում է ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և ՀՀ գիտպետկոմի-ի ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Անաստասիա Յուրիի Շումարովան արժանի է «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ իր կողմից հավակնած գիտական աստիճանին:

Հոգեբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Մ. Մկրտումյան

Մասնագետի (Մելս Մկրտումյանի) ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտքարտուղար՝ Հ. Թադևոսյան

25.05.2026թ